

ԴԻՒԱՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒԲԻ

Ն Ա Մ Ա Կ Ա Ն Ի ԳՐԻԳՈՐ ՇՂԹԱՅԱԿԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ

ՆԱՄԱԿ ԹԻԻ 14 (22Ա)

ՀԱՍՑԷ

Ի Ստամպոլ՝ Ի ձեռն Տեառն Յովաննու՛
Աստուածարան վարդապետին եւ մեծի Պատրիարքին՝ զի բացեալ ընթերցցի առանձին. անբաց յումեքէ հասցէ ի բարին :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

է՛

Տեառնդ Յովաննու Աստուածարան վարդապետիգ՝
Եւ մեծի Պատրիարքիգ՝ սրտարեկ անձամբ եւ լալոտ առջ՝ զողջոյնն սիրոյ ընծայեմ

Յուշիս լ [1733]

Եւ զայս ինչ յայտ առնեմ մեծութեան քում. զի ի Յունիսի ամսոյ գրեալ գիրն՝ զոր յղեցի ընդ զօրիմաց Սարգսին՝² ոչ գիտեմ եհաա առ քեզ թէ ոչ՝ յորում գրեալ էի ի նա զքոթ մահուան սիրամին որդոյ մերոյ Ամուսակալ հանճարեկ վարդապետին իմոյ՝ համառոտ՝ գրեալ, եւ այժմ զնոյնն զո՛ւմ :

Ձի Յունիսի ծա. յերկուշաբթի օրն, ի տօնի Ներսիսի Սրբոյ Հայրապետին մերոյ մեծի ի մեասասան ժամուն նստեալ ի խցնակս միամիտ զգիրն զայն զրէի ի վերջն հասեալ գրոյն՝ յայնժամ սպասուօր որդոյն մերոյ ստիպով եկն թէ վարդապետն կոչէ զքեզ՝ զոր բազմիցս այնպէս լեալ էք, զոր հաղճեկ վաւթով զնացեալ իմ առ նա՝ իսկ իրբեւ ետես զհէքս իսկոյն՝ ազաղակեաց փո՛ր իմ, փո՛ր իմ պատուեցաւ՝ եւ իջուցեալ յաթոռոյն յիւրոյ տեղաց վերայ, եւ նոյն՝

1 Գաբրիել վրդ. Յովսէփեանց կրտսերակամ է այս նամակը Վերաբացի մէջ (1915, էջ 11—17)։ Իր կրտսերակուրծի մէջ պահած է Շգրայակրի կրճատումները, գործածելով պատիւ ուր որ անհրաժեշտ է։ Մակայն այս ձեռք պատճառ եղած է մտք վրէպեալու, որոնց սակայն չիմ անդրադասեալ աշատի։ Կը ճշտեակիմ միայն կարեւոր վրէպակները։ Այսպէս, Գ. Վ. Յ. ունի Յովաննու, փոխանակ Յովաննու։

2 Գ. Վ. Յ. առաջին Ս տառը չունի։
3 Գ. Վ. Յ. մուս (համառոտ?)։ Նամակին մէջ շատ յստակ՝ համառոտ։
4 Գ. Վ. Յ. այն։

ժամայն աւանդեաց զբաղցր Հոպին իւր ի ձեռն բարի հրեշտակին Աստուծոյ . եւ իմ ի դողումն եւ ի հիացումն եղեալ թալիսցեալ անխոյ յերկիր . իսկ զաղէտ, զկսկի՛ծ, զո՛ղբ եւ զաշխարհնս մեր՝ մահաւանդ զարթնելի մօրն՝ ո՞ կարէ պատմել՝ ո՛հ աւուրն եւ ժամուն այնմիկ՝ եւ զի՞ յերկարեցից : Ի նմին ժամու ի սուրբ յեկեղեցին՝ իջուցաք զօրհնեալ մարմին գեղաղէչ քաղցր որդոյս՝ տեսաք սպիտակացեալ զօրհնեալ դէմս նորա որպէս զոյս՝ եւ հոտ աւուրն սնարժանս զՔրիստոս պատարեցեալ չորացեալ ձեռօքս օծի, բայց յահի կայի ի կողմանէ դատարանին . զօրանայ մեր որդի Գարբիէլ վարդապետըն՝ զնացեալ թէրճիման Ահմէտ պէկիրն առ Շահպատանի որդի Ապտովահապըն . նա՛ն եւ մեծ եղբայրն իւր՝ զբաղում զարտօսը հեղեալ . եւ յետոյ զաղուհացն ոչ մոռացեալ նայիպ Ապտովահապն վերոյիւնեցեալն՝ իսրոյն յղեաց առ բարեմիտ դատաւորն զդիր հրամանի թաղման առեալ երբ որ վարդապետն՝ մինչ մեք զկարգն կատարէաք, թարց միոյ փոկդի խոստամանս . աէ՛ր իմ Աստուած էք յղողդն, այլ նայիպ՛ եւ Ահմէտ պէկն զմեծ բարութիւնս եւ զյաւուրթիւնս արարին, յաւել նայիպն Ապտովահապ : Եւ զկնի այնն բարձեալ զօրհնեալ մարմին որդոյս, ողբերկական հառաչմամբ տարաք ի զիր հանդստեան ի սուրբն Փրկիչ՝ զոր գրեթէ եւ քարինք տեղոյն լային՝ զի ամենայն աղղք քրիստոնէից՝ եւ վէճիլք՝ նաեւ ալլազիք խուռն բարձութեամբ եկին ի թաղումն սնոր՝ եւ այնպէս մեծաւ փառաւորութեամբ եւ կսկծաղին դառն աղէտիւ իջի ի խորափիտն եւ զօսացեալ բազաօքս գրկեալ իջուցի ի հող տապանի, զոր ինքն ինձ պարզ էր առնել՝ վա՛յ ք (1000) գլխոյս եւ աչացո՛ն՝ Ե՛ս իւրն արարե՛ . եւ եղի հուր մարմնոյ Միխայիլ մեծի վարդապետին եւ Պատրիարքին՝ եւ զդիր տապանին գեղեցիկ ետու շինել ըստ ըզձիցս . որոյ Հողոյ նորա Աստուած որորմի եւ երկնից լուսոյն լուսաւորէ, եւ զբեղ եւ զմեզ Աստուած սուրբ Հողին միութարէ . եւ յիրաւի զի այժմ որդեկորոյս հա՛րս որոնեմ ի սուրբ վանացս՝ եւ յոչ դասնելն զցանկային իմ, զնամ յօրն մի կամ ք . անգամ ի սուրբ Փրկիչն՝ լա՛մ աղէտիւ ի վերայ սուրբ տապանի ըզձայոյս՝ եւ դամ ուշաթափեալ . բայց զհանամ զԱստուծոյ՝ զի մի փող հաքեմի ոչ զնաց . եւ համայնք՝ զԱստուած որորմին տան .

(Լուսանցքին վրայ) Իսկ զկնի սուրբ թաղման ցանկալոյս, յորում ի սուգ սպաւորեալ՝ նստէաք, ի դատարանէն, ի մուսայմէն, եւ յամենայն մեծամեծաց սրբոյ քաղաքիս զբոց եկեալ թէ զո՞ ոք կամիս զնել վէճիլ, զի մեք ոչ զոք կամիմք լինել, բայց զԳարբիէլ՝ վարդապետն ինդրեմք զի առնիցես վէճիլ, եւ ոչ զՅակոբն կամ զայլ ոք . եւ իմ արտասուօք ամենեցուն զայս պատահան ետու՝ թէ ի Ստամպոլ գիր եմ գրեալ՝ պատահան նոցա զայ եւ ապա տեսից թէ ո՞վ լինիցի . զի թարց Պատրիարքի եւ իշխանաց բոց եւ հրամանի՛ն եւ զոչինչ իր կարեմ առնել սաս . եւ նոքս այսու բանիւս համոզեալք զնային հաւանութեամբ . եւ այժմ թէ իր ինչ գիտցիլ¹⁰, Գարբիէլ վարդապետն եւ թէրճիման Պօղոսն՝ խզնացեալ՝ աշակերտ առ Քրիստոս հանդուցելոյն՝ զպա-

- 5 Գ. Վ. Յ. եկեղեցին;
- 6 Գ. Վ. Յ. Ապտովահապ (ծակը կարկաստած) ա : Որեւէ գիր կամ բառ կարուած չէ, եւ պէտք է ըլլայ Ապտովահապն. ես...
- 7 Գ. Վ. Յ. համայն :
- 8 Գ. Վ. Յ. սպաւոր եալ :
- 9 Գ. Վ. Յ. զգարբիէլ :
- 10 Գ. Վ. Յ. գիտցի :

տասխտան տան, այլ ոչ վէջիլ անուամբ, որ եւ զտուրբ անջ համբուրեն յալոյ :
 Եւ զի խոհեմն այն երանելին՝ զկտակ իմն ի կենդանութեան իբրևս զարժանա-
 լի զրեալ էր, յորում եւ զայս՝ թէ ի Ղալաթիոյ նորաչն սուրբ կեկեղեցին ինձ
 քառասունը մի տաս կատարելի՝ ինձ զրեալ էր. եւ զայս եւս զրեալ թէ ընա ի
 զրամի կողմանէ փող մի չունիմ, բայց միայն թարման պաշտամանս¹¹ ՚ ՚. (30)
 Խ. (40)¹² զուռ եւ ոչ այլ ինչ. զոր ընթերցայ ի լուր ամենեցուն, եւ զարմա-
 ցան ամենեքին ընդ նախապատրաստութիւն երանելւոյն. վասնորոյ խնդրեմ զի
 ի մէկ յախտաւորէ քառասուն զուռ փոխ առցես եւ ի Ղալաթիոյ Սուրբ Լու-
 սաւորիչ եկեղեցին քահանայից տայցես, զի զսուրբ պատարագն Խ. (40) կա-
 տարեցեն իմ սիրուն Աթոռակալ վարդապետի Հոյոյն : Եւ այժմ նա պնայ ըր-
 ճանապարհ ամենայն մարդկան, եւ եթող ինձ զկակիժ մշտնջենական, յիշելով
 զնորա զմանն, զյատարկն, զտէրն, զքաղցրութիւն. եւ զայս եւս զի այս ժբ.
 (12) տարի եւ կէս ի միասին աստ բնակեալ, ի մէջ անտանելի գործոյս ոչ յի-
 շեմ թէ օրիկ մի զլիմ սրտիկո խոցեալ է՝ կամ ընդդէմ պատասխանեալ. այլ յա-
 մենայնի հնարանդ՝ յամենայն իր զոր ասէի իւրն՝ եւ փութով կատարող. զոր
 կարծեմ թէ այսու սրտոյ իջանելոց եմ ի հոդ. այլ Տեառն կամք օրհնեալ եւ
 փառաւորեալ լիցի : Եւ այժմ սէր իմ, Տեառն փա՛ռք զոն միարանք ի սուրբ
 յԱթոռս, եւ յայլ մեր վաճառայան¹³ ճծ. (150) ողիք ընդ կարգաւորս եւ ընդ
 մահտեսիս՝ սակաւ ինչ պահաւ. եւ որք միամիտք զգործս իւրեանց թէ Հոյե-
 ւոր եւ թէ մարմնաւոր կատարեն ե զԱստուած օրհնեն. ե յոլովքն այսպէս
 են. զտանին մ'եւս որք ի միտտ այլ՝ եւ ի սրբառ եւ ի լեզուս¹⁴ այլայլք են բայց
 ոչ յայտնի. Յակոբ վարդապետն՝ զկնի մտխմանելոյ ցանկայոյն¹⁵ իմոյ՝ ի խու-
 ցրն մտեալ, յաղօթս եւ ի սեղանն միայն զայ՝ եւ ոչ ընդ ումեք խօսի. եւ ոչ
 ի բան կխառնուի. եւ ոչ մեք տեսե՞ք թէ ի վերայ գործոյ կաց, եւ թէ կոչեմ
 պայ տու իս եւ պնայ՝ բայց զսիրտտ ամենեցուն Տէր քննէ : Եղբայրն մեր Սահակ
 վարդապետն զքէն յոյժ շնորհակալ եւ զմեզ մխիթարէ յար. սակաւ ինչ մադ-
 մանն ծուռ կը մանէ՝ այլ խեղճն զի՛նչ առնէ՝ իւր գործն այն է. զնեհհակն իմ
 սրղոյս զմեր շեղածն Պետրոս կրկին յեւաֆայ յղեցի. եւ զՍարգիսն աստ բերի.
 Յովանէզն ի Եամայն կրկալ մնաց աստ՝ եւ բարեկամ այլազգէ՞ս յղեցից. Սուրբ
 վահճէք զոս աստ՝ զի ձեզ վնասէ. եւ ոչ զիտեմ թէ որպէ՞ս յղեցից. Սուրբ
 միւսմ ժողովեցի զամենայն զմիարանսն¹⁶ եւ ասացի ի մէջ սրբոյ եկեղեցոյն,
 թէ եղբարք, այս բ. ամ¹⁷ բ. ամիս ի մէջ ցաւոյ զուլով իմ որդին, Տանն¹⁸ ցաւն
 յիմ զլուխս էր, եւ յօժարութեամբ կատարէի զամենայն զգործն որպէս զի-
 տեքդ, ախն ունելով առողջութեան նորա. եւ այժմ այսպէս եղեւ եւ խաւարե-
 ցոյց վաչս իմ. խնդրեմ ի ձեզն զի որպէս մինչեւ ցայժմ էր այս ք. ամ ք. ա-
 միս, այլուի թող այնպէս մնայ՝ կրկին եւ կրեցից զվիշտս՝ զի վասն իմ մեղա-
 ցրս եղեւ այս՝ համբերեացուք մինչեւ ի մեծ Քարագէն զիւր վայ. եւ ամենայն
 զործակալ ի վերայ իւր գործոյն Հասարատ թող մնայ Հաւատարմութեամբ. եւ
 ընդ այս բան Համայնք զՎաւանութիւն տուեալ արձակեցան խաղաղութեամբ .

- 11 Գ. Վ. Յ. պաշտաման :
- 12 Գ. Վ. Յ. գ. ի. :
- 13 Գ. Վ. Յ. վաճառայոյ :
- 14 Գ. Վ. Յ. լեզուս :
- 15 Գ. Վ. Յ. ցանկայոյ :
- 16 Գ. Վ. Յ. զմիարանս :
- 17 Գ. Վ. Յ. զնեղուած՝ Բ. ամ :
- 18 Գ. Վ. Յ. չէ կրցած կարգալ այս բառը՝ Տանն :

եւ զի երկուքինքս այս՝ անհաշտ թշնամիք են միմեանց Յակոբն եւ Գարբիէլն . արդ՝ թէ Հաթիմի, թէ ալլազեայ եւ թէ միաբանից՝ զայս ասացի թէ ի Բիւրանդիոյ եւ ի Պատրիարքէն գիր պիտիր գայ . դու ալլ թոյլ չը թողուս՝ ժողովեալ զխորհրդական մեր բարեկամսն . եւ լաւ խորհրդով իր մի Հաստատեցէք եւ զգիրն ծածուկ ինձ յղեցէք՝ տեսից թէ ո՞րպէս կ'լինի : Իսկ թէ դու եւ բարեկամք Սրբոյ Տանն՝ Հրամայեցէք՝ թէ Տունն եւ բանն քո է, մեզ զի՞նչ փոյթ . սէ՛ր իմ հաւատա՛ զի րնաւ բանականութիւնս անացեալ է եւ արեւ վախ անկողով ժամ մի ի տեղ մի ոչ կարեմ Հանդարտիլ . զայս զերս ալլ ի դիշերի գրեցի բազում Հեծեծանօք եւ արտասուօք . իսկ թէ ասացես թէ անհար է թարց քո կամացն մեք զոք ո՛չ կարգեմք այդր վէճիլ ի վերայ քո . արդ՝ ես յայտնեցից զխորհուրդն իմ . ո՞հ եւ յ . վայ իմ դլխոյս , ես զիմ ըղձալի Հաննայն խնդրեմ ինձ Աթոռակալ . եւ այն ո՞ւր է . զնաց թռեալ իմ գեղեցկատես թռչունն յիմ ձեռացս՝ եւ ալլ աստ ոչ գտանեմ զնա , բայց թէ ի Հանդերձեալն . Հոգոյ նորա Աստուած ողորմի : Եւ որովհետեւ այս այսպէս եղեւ , ալլ զառաջնորդութիւն եւ զինչ անեմ¹⁹ . բայց թէ նստայց եւ ողբացից գմեղս իմ եւ զորդիս . իմա՛ զինչ ասեմ վարդապետ՝ Աստուած քեզ շատ յերկար կեանք տայ՝ ալլ ըստ ասիցի թէ այս ուղտն յամէնու դուռն կշողի , այսուհետեւ ինձ խորհուրդ եւ կամք ալլ որիչ ոչ գոյ՝ բայց միայն այս՝ զի զտեղոյդ²⁰ բանն Հոգացես՝ յերկուց զմինն կամ զՅարութիւն կամ զՅակոբ վարդապետքն զո՛վ ոք որ Համայնքն կամին՝ ի տեղի քո վէճիլ անուամբ Հաստատեցես եւ դու աճապարեալ աստ ժամանեալ Տան քո տիրութիւն ատնիցես , մինչդեռ ժամանակս ի ձեռսդ է Հոգա . մասն այնորիկ յորոյս Հիւանդութեան ժամանակն զայն զիրն քեզ եւ ժողովրդեան գրեցի . եւ մասն այնորիկ այժմ ամենեցուն ասացի թէ ի Ստամպուլս թուխտ պիտիր գայ՝ եւ յիմ միտս ոչ գրոյ մասն է՝ ալլ մասն քո զի²¹ բարով ելեալ զայցես մեծաւ պատրաստութեամբ՝ տեղոյդ Հաստատութեան լաւ , ե զայս ի միտ ա՛ծ²² զի այժմ թէ լուսաւորեալ Հոգին առ Տէր զնաց , ոչ բարին զյուրիս իմ կիսակնդան գոլով զամենայն որպէսն մի ըստ միովչ գրեցի քեզ . իսկ թէ Հրամանն Աստուծոյ Հասանէ՝ եւ օր մի ես պարզուայ՝ ո՞վ պիտիր²³ գրէ քեզ՝ թէ այս այսպէս եղեւ . եւ կամ թէ մինչեւ զրեն եւ մինչեւ դու զայցես՝ պատճառեով²⁴ զպատճառս , Տանն Հալն ո՞ւր կերթայ Հասանի . ի սէ՛րն քրիստոսի լաւ խորհեաց զայդ , եւ զայս մասն այն գրեցի զի իմ Հաստատ խորհուրդն այս է՝ զի դրան քո Հոգացեալ լաւ՝ ելեալ Աստուծով զայցես ի Սուրբ յերուսաղէմ , ի Սուրբ Տունս քո՝ զի ես կամ զնացից կամ առանձնացայց՝ եւ այն եւս մասն օգտի քո . եւ զի ես իմ կամաւս՝ զանուն որդոյ իմոյ՝ ի վերայ այլոյ ումեք ոչ կարեմ զնեյ՝ բայց թէ ի Հարկէ , եւ զի թէպէտ զայս ամենայն գրեցի քեզ՝ սակայն եւ զայս եւս գրեմ , զի մի կիսատ եւ չուտափոյթի զբանդ առնիցես՝ որ Աստուած չէնչ յերկուց կողմանց՝ տեղոյդ եւ տեղոյս եւ մեզ միտս չլինի , թէպէտ յաղողումն յԱստուծոյ է , զոր տէր Աստուած տացէ քեզ կարողութիւն եւ բարե յաղողումն : Պէ՛տ իմ , ես յիմս կողմանէ՝ առաջի Աստուծոյ զամենայն արուգութեամբ քեզ առանձին զրեցի զի զանխուլ ընթերցայ , եւ րնդ ճշմար

19 Գ. Վ. Յ. անեմ :
 20 Գ. Վ. Յ. զտեղացդ :
 21 Գ. Վ. Յ. զնզլած է գրի :
 22 Գ. Վ. Յ. ծանօթութիւն ունի , ուր կ'ըսէ . «Պատիւն աւելորդ» : Սակայն Շօքա
 յակրի ձեռագրին մէջ շեշտ է ւածօյն վրայ , ոչ քէ պատիւ՝ Աստուած նշանակութեամբ :
 23 Գ. Վ. Յ. պիտի :
 24 Գ. Վ. Յ. պատճառով :

ըիտ բարեկամացն մերոց զխորհուրդն բարի առնիջիք. եւ որպէս գրէք ինձ
 ասյնպէս Աստուծով առնեմ, թէպէտ առաջին մարդն չեմ, այլ զայրէթ է²⁵.
 զՊրոփոքորն եւ զԱեհաիք վարդապետան չթողուս յուրեք երթալ, այլ ընդ քեզ
 բերցես՝ կամ յդիցես. բայց ընդ քեզ բերելն լաւագոյն է: Ողջ լեր ի տէր զօ-
 բացեալզ Աստուծով, ի պարծանս հողոյս սգաւոր Գրիգորի որ ի Յունիսի Ն.
 զդիրս ցնդեալ մտօք գրեցի, ամէն: Յոյժ տենչանօք զողջոյն, զԱստուծոյ օրհ-
 նութիւն եւ զչնորհ Սրբոց Տեղեացս ընծայեմ իմ սիրածին որդոցս՝ Յարութիւն
 եւ Յակոբ հանճարաշատ վարդապետացս. եւ սիրով եւ հարկիւ պատուիրեմ իմ
 որդոցդ՝ թէ զԱստուծոյ՝ եւ զՍրբոյ Աթոռոյս՝ եւ զմեր ծերութեան օրհնու-
 թիւն կոիւրէք, պարտիք հնադանդիւ հրամանաց Հօրն ձերոյ մեծի վարդապե-
 տին, եւ ամենայն մեծամեծաց տեղոյզ մեր բարեկամացն, բարի կամացն եւ
 խորհրդոցն, կրկին պատուիրեմ. եւ այլ ամենայն վարդապետաց՝ եւ նորըն-
 ծայից՝ եւ պաշտօնէիցդ՝ կրկին զԱստուծոյ²⁶ օրհնութիւնն ընծայեմ մանա-
 ւանդ իմ Գաղպար տիրացուին, տնօրինական տեսրեբացն տպելոյ Հոգս արէք
 վասն Աստուծոյ, եւ այդ զբարբերիլ լաւ ազաթ անէք, զի պարծեցայ իւրն թէ
 կղբեմ որ քեզ լաւ մտիկ անեն, եւ զի պարծեցաւ թէ զդիրս շուտով կհասուցա-
 նեմ, զոր Աստուած յաջողէ, ամէն:

(Անկիւնը) Մեր բարեկամ Երուսաղէմացի Տիդորոս Փաղտին աղային՝
 ի մէնջ շատ բարեւ անէք. եւ ստիցէք իւրն թէ զքո քաղցր բարեկամ Հանայն՝
 յորժամ բարով դաս՝ այլ ոչ տեսանես, ո՛հ զլիտոյս, եւ ի քէն խնդրեմ Պե՛տ
 իմ զի լաւ տիրութիւն դմա առնիցես, վասն սիրոյ որդոյն մերոյ, զի յոյժ բա-
 բեկամ էր նմա: Ծեր բէիդ վարդապետն այլովք եղբարքք զողջոյն սիրոյ քեզ
 ընծայեմ՝ եւ ասին յԱստուծոյ մխիթարիս, զլուխդ պայծառ ողջ կացցէ²⁷:
 Վասն Աստուծոյ Պե՛տ իմ զՂալաթիոյ զքառասնոցն որ վասն ցանկալի որդոյն
 մերոյ զրեցի ի վերոյ՝ շ՛ոռանաս՝ տաս կատարել աղաչեմ:

(Դուրսի երեսիմ, հասցէէն վար) Սէ՛ր իմ զայս գիրս²⁸ զանխուզ քեզ
 զրեցի՝ եւ դու ումեք սաստի կամ մեղազբանաց զիր աստ մի՛ գրեր՝ բա՛ց ի
 մխիթարանաց եւ ի յորգբանաց. զորպէսն Տան քո՝ իմանալոյ վասն զրեցի
 քեզ զի դամենայն իմացիտ. բայց կրկին դրեմ. այլ զգիրդ ի՛նչ անեմ, զքո
 բարով զալի խնդրեմ, մինչ յաշխարհի իմ զի տեսից, և դո՛նէ օրհնեալ ձեռօքդ՝
 դհողոս հողոյ²⁹ տայցես. զի խղճուկ ձագուկն իմ³⁰ ճա՛խ պտպաս չեկաւ որ տե-
 սեր էի՞ ստելով՝ հէսրաթով ել յաշխարհէ, եւ նա՛ զի ունէր զմխիթարութիւն
 ոչ սակաւ եւ զայս ասէր՝ ե՛ս եղկելիս՝ եւ սգով պաշարեայս զի՛նչ ասացից.
 մտօ՛քը խորհեաց. եւ մի՛ մեղազրեր. ահա հասարակաց դիր մի զրեցի եւ բնդ
 դրոյս յղեցի³¹. թէ պիտոյ է՝ յայտնեա՛լ, եւ թէ ոչ՝ դու գիտես. եւ կրկին ի
 Տէր ողջ լեր՝ ամէն:

(Դարձեալ դուրսի երեսիմ, հասցէին մօտ, տարբեր գիրով) Վասն
 մահուան աթոռակալ Հեննէ վարդապետին:

- 25 Գ. Վ. Յ. զայրէթէ:
- 26 Գ. Վ. Յ. զայս:
- 27 Գ. Վ. Յ. կացցես:
- 28 Գ. Վ. Յ. գրբ:
- 29 Գ. Վ. Յ. զհողոս հողոյ հողոյ:
- 30 Գ. Վ. Յ. զեղուած՝ Բ՛:
- 31 Տեսնել յաջորդ՝ Էիւ 15 (24Ա) նամակ:

ՆԱՄԱԿ ԹԻԻ 15 (24Ա.)

ՀԱՍՏԷ

Աստուծով
 Հասցէ գիրք յԱստուածակեցոց Մա՛յր Քաղաքացն
 Ի Ստամբուլ, Ի ձեռն Լուսաւորչադուան
 օրհնեալ տղիս մերոյ, ամենայն քահանայից
 և ժողովրդոց՝ Ի բարին:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Է՛

(Պատրիարքական կնիք)

ռնձր. Յունիս ՚.

Առ սրբաւէր քահանայոց, և առ բարեպաշտ ժողովուրդոց. առ մեծամեծ իշխանսդ և առ երկիւղած յԱստուծոյ մահաւետեացդ և մահաւետեացու անմինսդ՝ որք ի մեծդ Բիւզանդիայ բնակեալքդ էք Լուսաւորչադուան երամբքդ՝ եկրդ և բնակօրդ՝ երկրքդ և միտաՓիլիքդ՝ հոգեւոր Հա՛րբք՝ եզրարբք՝ և որդիքդ իմ, հոգեւոր սիրով սիրեցեալքդ իմ. Ե՛ս մեղապարտ Գրիգոր սղաւոր վարդապետս՝ անարժան սպասաւորս Սուրբ Տնօրինական Տեղեացս Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ և աստուածազէր Սրբոյ Աթոռոյ Տեառնեղբոր Արքայն Յակոբայ, և Սուրբ Գլխադրի մեծի Առաքելոյն Սրբոյն Յակոբայ: Գրեմ զձիր աստուածային օրհնութեան՝ և զուրբ ողջունի շնորհիւ Սուրբ Տեղեացս. և Հայցեմ յԱստուծոյ զի պահեսցէ զձեզ յամենայն չար վորձուքեանց: Ընդ որոյ և դայս ծանիք սի՛րելիք մեր ի Տէր. զի բառ նախկին ուխտին մերոյ առ ձեզ՝ զի զոր ինչ իր Սրբոյ Աթոռոյ՝ այսր զիպցիի՝ զամենայն ւտոյդ և անխալ զրեցից ձեզ՝ և զուք ի լսելն հուստայցէք զորոյ և խօսից մերոց՝ զոր մինչև և ցաժմ այնպէս է եղեալ, զոր Տէր Աստուած զձեզ զամենեան օրհնեցէ՛ ա՛մէն: Եւ ոյժմ ահա այս ինչ զիպցեալ՝ զի բաղմաշխատ ծառայն Աստուծոյ և Սրբոյ Աթոռոյ, հոգէծին որդին իմ Աթոռակալ Հանայ Բովհաննէս վարդապետն՝ որ այս ք. տարի և ք. ամիս հիւանդ անկեալ կայր՝ ի Յունիսի ծա. փոխեցաւ. առ Քրիստոս երանելի մահուամբ, և թաղեցաւ ի Սուրբ Վանքն Փրկչին. որոյ հոգոյ նորա Աստուած ողորմի, և ձեր օրհնեալ պատուական զլուին ողջ լիցի. այլ զիս ո՛վ ոք ողբասցէ՛ զի աչքս կուրացաւ և իմ մէջքս բեկաւ և եկ խեղճ և ողորմելի՛ ալ Տեառն կամ օրհնեալ լիցի: Եւ յետ երանելի թաղման իմ քաղցր որդոյն՝ թի՛ հաքիմքն՝ թէ քաղաքացիք ստիպեցին զիս թէ նո՛ր վէճիլ զիր. և ես ասացի թէ մինչև ի Ստամբուլ Պատրիարքէն՝ և յիշխանաց զիր ոչ դայ՝ և՛ս վէճիլ չեմ հաստատեր ինքնագյուլս: Եւ այժմ արասուօք զձեզ աղաչեմ, ո՛վ Տեա՛րք Սրբոյ Տանս՝ ժողովեցարուք ի միասին՝ և Աստուծով զայս բարի խորհուրդս խորհեցարուք. ի յիմ Պատրիարք վարդապետի յաշակերտաց զՅարութիւն կամ զՅակոբ վարդապետն՝ զորն որ զուք կամիք՝ զրէք վէճիլ Պատրիարք վարդապետին յայդ տեղդ՝ և Սուրբ Երուսաղէմայ նազըր կարգեցէք քանի մարդ կամիք ի վերայ նոցա որ զՍուրբ Աթոռոյս բանն ի տեղդ հոգան. և զԲովհաննէս Աստուածաբան վարդապետն և զմեծ Պատրիարքն՝ ուխտի անուամբ Արքունի հրամանաւ և մարզով յղեցէք աստ՝ զի եկեալ իւր և ձեր Սուրբ Տանն տիրութիւն առնիցէ. զի և՛ս ահա ծերացայ. և ցուպ ձերութեանս մահրացաւ և մարդոյ զորութիւն և իմաստ ոչ է մնացեալ յիս՝ զուք զիտէք՝ բարձի թողի շանէք զայս բանս՝

յետին փոշխմանութիւն օգուտ չունի. եւ ահա սպասեմ զալստեան մեծի Պատրիարքի վարդապետին եւ ոչ այլոյ վէճիլի. եւ թէ Հրամայեցէք ինձ՝ թէ զուղբոս բանն յայդ տեղդ տես եւ քեզ վէճիլ հաստատէ՝ զի անհնար է Պատրիարք վարդապետին (յուսանցիմ վրայ) ի Ստամպուլու ելանել, զայն ձեր կամքն զիտէ՝ սուլնն եւ մեք ձե՛ր եմք. բայց վախեմ թէ յետոյ փոշխմանութիւն լինի. զի ես այլ Հանայ ո՛չ կարեմ դատանել, և թէ այդ մարդդ չի դայ՝ շաշխմութիւն շատ կլինի. թէպէտ յոյս մեր յԱստուած է, այլ զիտէ Տէր զի փետրաթափ եւ թեւալորոյս թռչնոյ նման եղեալ եմ. զղբածս եւ զխօսածս այլ չեմ գիտեր, միայն ի Սրբոյ Տանս պայծառութիւն, եւ յիմա խղճութիւն հայելով՝ ողբամ թէ վերջն ի՞նչպէս կլինի: Երբ արարից խօսիցս՝ զի կուրացայ յարտասուաց. ես զիմ խորհածն եւ զիտցածս գրեցի եւ հաստատ ի վերայ այնմ խորհրդոյն եմ. զուք քան զիս՝ այլ գիտունք եւ խորհրդականք՝ որպէս կամէք արնպէս արարէք որ ի տեղս եւ յայդ տեղդ վնաս մի չլինի, եւ մեղադիր ինձ լինիցե՛ք, թէ զու արիւր տակով. եւ ո՛րն որ բարի է՝ Աստուած զայն յաջողէ. միայն գառաջին հալն եւ զձեր քաջածն ի միտս ձեր բերէք, զի այլ տան եւ վանից նըման չէ՛ այս օրհնեալ Սուրբ Տունս՝ Հրմբնթէթիկի (այսպէս) վրայ է՝ շատ բրտացառութեամբ տիրութիւն և օգնութիւն պիտոյ է սմա. և խնդրեմ յԱստուծոյ զի զձեզ հողով եւ մարմնով օրհնեսցէ՝ ա՛մէն: Ի թվ. ռճԱՐ. Ի Յունիսի 1. գրեցաւ ի սուրբ յերուսաղէմ թալկացեալ ձեռամբս՝ և բազում արտասուօք. բաւ է:

ՆԱՄԱԿ ԹԻԻ 16 (28Ա)

ՀԱՍԹԷ

Աստուծով

հասցէ գիրս ի Ստամպուլ՝ ի ձեռն Հայոց Պատրիարքի,
Տեառն Յովաննու Աստուածաբան Վարդապետին. անբաց
ի նա հասուցանողն յԱստուծոյ զվարձս առցէ. ամէն:

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ



Տեառնդ Յովաննու Աստուածաբան Վարդապետիդ՝ եւ մեծի
Պատրիարքիդ, զողջոյնն սիրոյ արտաթախիծ սրտիւ ընծայեմ:

Յուլիս ԻՔ. [1733]

Եւ զայս ինչ քու՛մք մեծութեան յայտ առնեմ, զի յետ առ Տէր փոխեցելոյ սիրասուն որդոյ ի՞նչոյ Աթոռակալ վարդապետին, երկու՝ եւ այս երիցս Լոյեւ զիր զոր գրեցի քեզ՝ եւ ի քէն կւ յայլ բարեկամաց մերոց զմի գիր ոչ ընկալալ. եւ այս մեծ հիացումն, զի յօրէ յօրմէ հետէ՝ ուխտաւորքն աստի դեպեալք են՝ բնառ մի գիր եւ խապար ի մեզ չէ հասեալ. եւ զվասն էրն ոչ զիտեմ զի այլոց արկաց կու գայ գիր՝ եւ մեզ՝ ո՛չ. վասն այնորիկ կտառապիմ. եւ թէ գտնողոյս՝ եւ զմեր զօրպէսն կամիս իմանալ՝ չիմանալդ լաւ՝ քան պտեղեկանալիդ. զի Սուրբ Երկիրո՛ւ անտէրունջ ի տեղապահաց եղեալ զիմեանս փաճոտե՛լ կամի՛նչարքնս. եւ՝ ոչ գոյ ոք ի քաղաքիս զի զնոս օանձաւարիքէ. Տէր պահեսցէ զմեզ յամենայն յորդայնից, զի միաբանք Սրբոյ Տանս՝ զմիմեանս փոխարկեալք՝ մինչ ի լոյս դեզերին յերզս մեր տանց. միթէ յԱստուծոյ

լիցի ճար: Եւ յետ փոխման որդոյ մերոյ Աթոռակալ վարդապետին առ Տէր, իբրեւ աւուրք ինչ անցին, ի Յուլիսի ին: օրն Ուրբաթ, ի դիշերի յորժամ ըզ՝ Սաղմոսն լրացայ, ի փոքր աթոռոյս վերայ գիր մի տեսի եղեալ յորում զամբաստանութիւն ի մեր Գարրիէլ վարդապետէն գրեալ առտ առ եւ իբաւ անթիւ, զի այժմ նա՛ է որ խօսի ընդ աշխարհիս վասն Տանս օգտի, այլ ոչ թէ վէքիլ անուամբ. երկուցեալ շարացն թէ մի գուցէ հաստատեցի, եւ զիս ընդ նմա պատարակեալ, եւ թէ ի Բիւզանդ բողոքեմք. եւ ի Միշարաթի օրն զանէ՛ծս եւ ըզկապանս ի վերայ զբողին հրապարակաւ եղեալ արձակեցի զնոսս զնալ ո՛րք եւ իցէ: Բայց ոչ իմացայ թէ ո՞վ ոք զայն արար. եւ զայս վասն այնք զբեցի, զի իմացիս թէ յետ Հեննէին՝ Տունս յո՛ր կէտն հասաւ. եւ Աստուած փրկէ յայլ փորձանաց, զի այս սկիզբն է երկանց. թէ յայս երկիրս ոչ հասիք փութով. զորպէս Սրբոյ Տանս յետոյ կիմանայք. եւ այս ոչ ի դրսէ է, այլ ի ներսէն եւ յընտանեաց եւ աներեւոյթ՝ զոր Տէր զչար խորհուրդս նոցա խափանեացէ: Եւ զմեր ողորմելի Պետրոսն յնաֆայ յղեցի բէիզ. ծ (50) օր շմնաց նա այլ մեռաւ՝ Տէրն ողորմի իւրն: Եւ Ազարն մեծ բարեկամութիւն արարեալ թողեաց ի տեղւոյն յայն՝ զոր կամէր օրհնեալն յԱստուծոյ մահտեսի Մեղքոն Ազայն զնեւ եւ ոչ ետուն եւ այժմ այսպէս եղեւ: Տուր ողջոյն յինէն Հալի աղային (յուսանցքին վրայ) եւ աւետիս՝ զի յոյժ ցանկայր իւրն առնել յիշատակ. եւ այժմ վասն այնմ ոչ զբեցի իւրն, զի զեռ զգիւնն չկտրեցարք: Առ Մալխաս Օղլի մահտեսի Յովսէփն ստուաֆ մեր Պետրոսին զբամ կայ՝ Թամասուկն առ Պալատցի սառաֆ մահտեսի Գարրիէլն է. լեր մուղայիթ զի առցես. եւ զԼօրխմազ Սարգիսն յառաջ քան զնան յլեա՝ զի իմացուք զորպէսն քո: Եւ ողջոյն տամ ամենայն բարեկամաց մերոց մահտեսնաց, եւ որդոցս հարազատից վարդապետաց, եւ ամենայն սպասաւորաց քոց՝ եւ ողջ լեր ի պարծանս Հոգոյս Գրիգոր սգաւորի, որ ի Յուլիսի իք՝ զգիրս ծրեցի, սաստիկ ստիպով, վասն զբարբերիլ փութացուցանելոյ. բաւ է: Բէիզ վարդապետն ողջոյն սիրոյ թեղ ընծայէ. եւ Գարրիէլ վարդապետն եւ թէրճուման Պօղոսն զամբ համբուրեն:

ՆԱՄԱԿ ԹԻԻ 17 (29Ա)

ՀԱՅԹԷ

Աստուծով
Հասցէ գիրս՝ ի Ստամբուլ՝ ի ձեռն մեծի Պատրիարքի Տեառն Յովաննու Աստուածարան վարդապետին անբաց ի բարին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

է՛
Տեառնդ Յովաննու Աստուածարան վարդապետիդ ողջունիւ
ի Քրիստոս, կրկին յայտ լիցի:

Յուլիս 1. [1733]

Ձի գլեխ Սուևուլչի որդի շեխ ինալիւն՝ որ այժմ պաշտաթիպ՝ է, լուաք թէ մանդուլ արած է, ե զԱպու Սուևուրի որդիքն, զԱպտուհմանն կամ զԻւր

1 Դիւանապետ:

Լիբրալը դժբախտինն ի տեղի նորա պաշքաթիւյ է արած . եւ եղև մեղ երից ար-
 դացս յոյժ տրամութիւն, զի զգատարանի մեծ գիրքն պաշքաթիւյն կրտսէ, և
 մի՛ արասցէ Տէր՝ թէ յայն ք . եղբարց ձեռքն անկաւ այն մեծ գիրքն . երիցս
 այլ մեծամեծ գունդի կրանան . վասնորոյ նորա փութացան զբել լիբրանց մար-
 դոցն, ահա եւ մեք զբեմք քումդ մեծութիւնն՝ զի երեքդ ի միասին ժողովոյիցի
 սպլաց զլիսաւորքդ, եւ կրկին ի վերայ շէի թալիին թէ՛նխտիս՝ տայք աննել ըր-
 պաշքաթիւոյութիւն . զի է նա երից ազպացս յայժ քարեկամ, եւ զոր ինչ խնդ-
 րեմք նոյն ժամայն կատարէ . եւ նոցա թարց արդի է, և սա արդ այլ էառ ի
 գատաւորէն, եւ բերեալ ինքն շէի թալիին ի մեղ ետ՝ որ եղաք ի մէջ գրոյս եւ
 առ քեզ յղեցաք, զի սրտոցաւութեամբ Հոգայցես՝ ընդ միւս ազպացն՝ եւ ըր-
 նոսա յորդորեցես առնել զայդ՝ եւ ինքն իսկ շէի թալիին՝ ողջոյն տայ քեզ եւ
 ինչորէ՛ զչնորոս զայս առնել նմա, յիշելով՝ զհայրենական բարեկամութիւն . եւ
 զոր ինչ խարջ՝ Ֆլորմանին զնասցէ՝ երեքդ Հոգայք, եւ մեք աստ ի նմանէ կառ-
 նումք, զի ո՛չ է քան զայլս . բայց Աստուծոյ համար ի ծածուկ լիցի, զի մի՛ ք .
 եղբարքն իմացին, զի թէ իմացան՝ մեղ մեծ վնաս կհասուցանեն, որպէս այս
 քանի տարի միշտ հասուցին . եւ այդր քեզ բարեկամ կմեւանան՝ մի՛ հաւա-
 տար նոցա զի բուն թշնամիք են Սրբոյ Տանա, եւ շէի թալիին մեծ բարեկամ .
 ահա եւ տիպար Ֆաղլտին աղային եւս զրեայ է շէի թալիին՝ անպատճառ
 զայս բանս Հոգայք . եւ ի մէջն ողջոյն մատո՛ Ֆաղլտին աղային եւ սոս թէ
 լաւ որ յայս ժամանակս յերուսաղէմ շեն՝ զի յո՛յժ ի խառնակութեան միջի
 գոն՝ անպիտաւոր գորով . եւ մեք յահի եւ ի կսկծանաց միջի կեամք : Եւ մեր
 միւս մեծ բարեկամ Շահպատանի որդի նայիւ պի թալիին թէ՛նխտիս զքեզ
 ողջունէ, եւ վասն շէի թալիին բանին խնդրէ եւ նա զի մուշայթի լիցիս . եւ
 ինքն եւս արդ մի յղեաց, եւ անցեալ տարոյ Հաշիմ զատէ տեղոյս գատաւորին
 պի՛ր՝ եւ խնդրեաց զի նախ զպիրն առ նա յղիցես, եւ թէ զարդն խնդրեաց՝ եւ
 զայն եւս յղիցես . նա կհոգայ . եւ թէ նա չհոգայ՝ դու տաս Հոգալ . թէ քանի
 մի փող կզնայ՝ պատուական գլուխդ ողջ կացցէ . զի՞նչ առնեմք, հարկ ի վե-
 բայ կայ . (Լաւանցիքիմ վրայ) եւ յայսմ ամի մեղ շատ լաւութիւն արարին այս
 երկու արքն, աւելի քան զամենայն նայիւ էՖէնտին . վասնորոյ խնդրեմ զի
 Հոգայցես զոտոս բանն . եւ ահա նայիպն մէկ կարգ այլ յղեաց, զերկուսն այլ ի
 գրոյս մէջն եղեալ յղիցի զի Հոգայցես որպէս ի վերն զրեցի . զիտեմ զի զահ-
 մէթ⁴ է քեզ՝ այլ խնդրեմ զի մի՛ նեղասրտիցիս . եւ զմիւս զիրն որ առ տագ-
 նապ սրտու զրեցի, ումեք մի՛ յայտնիցես՝ միայն դո՛ւ իմա, եւ զՏանա ե զը-
 դաւորին Հոգան Աստուծով Հոգա՛ . եւ թէ հնար է՝ զպարզ փութացո աղաչեմ .
 զի այժմ յոյժ խզուկ եղեալ եմ, եւ միշտ յԱստուծոյ ժտեմ թէ՛ մի՛ ընկենուր
 զիս Տէ՛ր ի ժամանակս ծերութեան, եւ այլն . միթէ լուիցէ Տէր . եւ ողջ լեր
 Տէր եւ ի պարծանս յոյժ հիքացելոյս Գրիգորի, որ ի Յուլիսի Վ . զպիրն ծը-
 ցի : Որպոցս պետաց, և առհասարակ ըրոյ սպասաւորաց կրկին զողջոյն եւ
 զԱստուծոյ օրհնութիւն ընծայեմ : Ո՛հ այլ սրտիկ չունիմ շատ պիբ գրելոյ՝ զի
 եմ ի մէջ անփարատ սպոյ՝ այլ կամք Տեառն օրհնեալ լիցի, ա՛մմն :

Պե՛տ իմ եւ լո՛յս աշացս՝ լալով զքեզ աղաչեմ, զիմ քաղցր որդոյ Ա-
 թոռակալ վարդապետի գտնորինակտեաց շարագրեալ տետրերն անպատճառ
 տաս տպել՝ կրկին աղբրեմ :

2 Նորոգել, վերահաստատել :

3 Ծախս :

4 Նեղութիւն, աւելորդ աշխատանք :

ՆԱՄԱԿ ԹԻԻ 18 (30Ա)

ՀԱՍԾԷ

Աստուծով

Հասցէ գիրքի ի Ստամբուլ՝ ի ձեռն Հայոց Պատրիարքի՝ Տեառն Յովաննու Աստուածարան մեծի Վարդապետին. անրաց ի նա Հասուցանողն՝ յԱստուծոյ զվարճս առցէ, ամէն:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Է՛

Տեառնդ Յովաննու Աստուածարան Վարդապետիդ, եւ մեծի Պատրիարքիդ, զողորմն սիրոյ ընծայեմ կարօտիւ:

Օղոտոտս Դ. [1733]

Եւ Հայցեմ յԱստուծոյ զի կացցես անփորձ ազատ յամենայն չարք. եւ այս ինչ լիցի քեզ յայտ, զի յայսմ ամի՛ քան զայլ տարիսն՝ ա՛յլ շատ գիր գրբեցի քեզ խոցեալ սրտիւ, զորն որ իմ յօժարութեամբս եւ զորն որ ի Հարկէ խնդրողաց. եւ թէ ամենայն հասեալ է ի քեզ դիտեմ զի յընթեանուդ կրարկանաս. եւ խնդրեմ զի մի լիցիս մեղադիր, որպէս ահա եւ այժմ Հարկ եղեւ ինձ զրելոյ քեզ զայս. բայց ճշմարտիւ գրեմ վասն այդ Մէհմէտ Աղայ ոսկէպիտոց իշխողիդ՝ որ յանցեալ ամն եկն աստ՝ ի Սուրբ Քաղաքս Երուսաղէմ, եւ իսկոյն Համբաւն տարածեցաւ քաջութեան, եւ նկուն եղէն ամենեքին, որ եւ ոչ կարէին յայտնադէմ շրջիլ, որ եւ զբազում տիրութիւնս արար, եւ միշտ յուսողբելով թէ ոք զձեզ նեղեացէ ինձ ա՛ղջ արարէք. բայց ո՞վ ոք կարէր յոսկէպիտոցն յաւուրս զորա՝ ումէք զվնաս ինչ Հասուցանել. եւ ա՛յնպէս թուի ինձ թէ ի բաւում ժամանակաց՝ այսպիսի քաջատիրա Այա՝ ի Սուրբ Քաղաքս ոչ էր եկեալ. որ զհամայնս յաղթէր՝ եւ դա յաղթեաց ա՛յնքան՝ մինչ զի սարսէին ամենեքեան ի լսել զանուն. եւ ի մանդուլն լինիլ զորա՝ յիրաւի զի բնաւքս տրտմեցաք այլ զի որպէս օրէն է ինքեանց՝ զայն առնեն միշտ անխռով զմիմեանս փոփոխելով մեծաց հրամանաւ. վասնորոյ ի զայ նորոյն՝ ահա դա մեր բարեկամ ելեալ եկն այդր. ուստի ի տեսանելն՝ խնդրեմ զի զչնորհակալութիւնս յորով մատուցես՝ թէ պէն շատ շնորհակալութիւն գրեալ են ի Սուրբ Սաղիմայ՝ քանզի ինքն զսոյն խնդրեաց, եւ ահա են զրեցի. եւ քեզ զիւրին է կատարել՝ թէ եւ թեթեւ ընծայիւք լիցի՛ չէ ի կորուստ քանզի կամի կրկնակի զայ այսր՝ թէ տայցեն: Եւ թէ կամիս գտեղոյս զորպէսն իմանալ զաշխարհիս՝ ցզա իսկ Հարց՝ նաեւ զմեր խզճութիւնս՝ թէ յո՛րպիսի դառնութեան միջի կեամք. իսկ զՏանս քո՝ դամենայն զորպէսն եւ զիմս խզճութիւն՝ ի սայխանճու զրոյն լիպպէս ծանիր եւ զգալդ փութացո թէ Հնար է. եւ զի՞ է երկրորդեյն կրկին եւ զպատուական զլուրդ ցաւեցնել. եւ զի վերջ որ ոչ եկն յայսքան ժամանակս՝ է՛ ինձ տազնապ մեծ. վասնորոյ մի թողուր զիս այսպէս խղճալի, զի եմ իբր զիսայտ չորացեալ ի տրտմութեան եւ ի սոյոյ միջի ընկզմեալ. այլ կամք Տեառն լիցի օրհնեալ, եւ պատուական զլուրդ ապրեալ. եւ ոչլ յեր ի պարծանս խզճոյս Գրեղորի, որ յՕգոտոտի Դ. զգիրս ծրեցի՛ բաւ է:

(Լուսանցքիմ վրայ) Ողջունեմ օրհնութեամբ գլխոսն խոհեմ զորդիսն իմ զհամայնս, եւ օրհնութիւն տամ սպասաւորաց պատուական անձինդ, եւ ամենայն բարեկամաց զմեզ Հարցանողաց: Պես իմ վասն Աստուծոյ զմեր որդի Պրոխորոն եւ զԱւետիք վարդապետան՝ մի՛ թողցես յուրեք զնալ՝ նախ

աստ գայցեն եւ ապա դոր Տէր առաջնորդեսցէ՝ ո՛րայէս առնիցեն. եւ տամ սիրով զողջոյն նոցա, եւ Տէր լիցի ինքեանց վարձաւատոյց: Իմ որդոցն բազմաշխատից՝ Գաղար, Յակոր եւ Ալէքսան հարապատաց զկրկին օրհնութիւն ընծայեմ. բաւ է:

Կրկին լալոտ աչօք զողջոյն եւ զնորս Սուրբ Տեղեացս ընծայեմ երկուց Եպիսկոպոսացո Քարութիւն Յարութիւն եւ Յակոր խոհեմ պետացո, եւ Յովհաննէս վարդապետիզ եւ համառօտ դայս ասեմ. իմ Հէննէն զիմ լոյս աշացս խաւարեցոյց եւ զնայ առ Աստուած. տեսանեմ զձեզ ո՛րդէք, թէ ո՞րպէս լի-նիցիք ցո՛ւպ ծերութեան մեծի Հօր ձերոյ, եւ դառամեցեալ պապուս նորա զընայոյ՝¹ եւ Տէր զձեզ օրհնէ: Ամէն:

ՆԱՄԱԿ ԹԻԻ 19 (32Ա)

ՀԱՍՑԷ

Աստուծով

Հասցէ գիրս ի Ստամպօլ, ի ձեռն Հայոց Պատրիարքի՝ Տեսան Յովաննու Աստուածարան Վարդապետին. անբաց ի նա հասուցանողն՝ յԱստուծոյ օրհնեալ լիցի. ամէն:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

է՛

Տեսանդ Յովաննու Աստուածարան Վարդապետիզ եւ մեծի Պատրիարքիզ զողջոյնն սիրոյ՝ ընծայեմ մեծաւ սիրով:

Սեպտեմբեր ԻԲ. [17:33]

Երջանիկ Պետիզ իմոյ եւ աշացս լուսոյ.....¹ եւ յայտ առնեմ դայս ինչ, զի ի Սեպտեմբերի ԻԲ. գիր քո մէնդիլով ի մեզ եհաս, յորում գրեալն էիր թէ Ֆէրմանն եղեւ որ վասն ճանապարհաց, եւ շաւուշիւ յղելոց եմ. և թէ ԷՅ (700) զուշ կզնայ. հո՛գի թէ Աստուած յաջողեաց որ այն հրամանն էանց՝ եւ ճանապարհաց անդորրութիւն եղեւ որ ուխտաւորքն հանգիտս դան՝ ոչ միայն ԷՅ. այլ ե՛ւս աւելի արժէ՝ եւ յօժար եմ Աստուծով ի տան՝ զի շես լսեր թէ գինչ կոործեն ի խղճերաց զլուին. մեծ վարձք է քեզ թէ մուշայիթ լինիս՝ եւ թէ չլինի՝ կրկին դատիս մինչեւ Աստուծով հաստատ լիցի. պիտես զդա տու-նոյ դաղմի՞ բանն. եւ թէ ինչ կզնայ թող գնայ՝ պատուական գլուխդ ողջ կացցէ՝ մեծ յիշատակ է թէ հաստատեսցի: Եւ միւս բանն Հալապու, որ մեր որդի Գարբիէլ վարդապետն զնեղութիւն եւս կրեալ է այդր՝ ի ձեռաց այն մալիքանայ առնողին. եւ ահա դանունն եւ գտեղն գրեաց եւ է ի մէջ գրոյս. գայն այլ ճար մի արա կամ ի նմանէ վերցո եւ կամ թէ յերնէ գնեա, եւ Ֆէրմանն

1 Նամակի քուրթը կարուած ըլլալուն, շատ յստակ չին այս երկու բառերը. քեւրեւ՝ զնոր գնալոյն:

1 Նամակագրին կազմէ բաց ձգուած:
2 Ընդգծուեց իմ կազմէս: Իմաստը անձամօք կը մնայ ինձի:

արա, եւ յղեալ ի Հալապ՝ ի ձեռն մեր հոգետան դործակալ Հալապցի սարկա-
 ւապ Յովանէսին որ անդր է ի հոգետան մէջն, զի բարձրցա զաղաղակ գրեցին.
 խեղճ են սէֆրի՝ մարդիկիքն. եւ եկեալ մահտեսիքն եւ ո՛ւմ Համար կիթողուս
 բանն՝ զի ամէն ոք հետ իւր բանին է. եւ Տէր քե՛ղ տուեալ է զչնոր՝ զի զայդ-
 պիտի վարձուց իրոն հոգասցես. մի՛ ձանձրասցես զայդպիսի իրոն հողալ եւ
 յԱստուծոյ զվարձս առնուլ մինչդեռ ժամանակս ի ձեռսդ է՝ եւ Տէր տայէ քեզ
 կարողութիւն, ա՛մէն: Լո՛ւր եւ զայս իղճալի լուր, զի մեծ Պէկն՝ եկն աստ՝
 եւ այնքան ընտանեացք ընդ նմա, զի ասելոյ չէ. բայց անբարտութիւն մեր ոչ
 կթող շատ յատջանալ զի տկարացաւ հիւանդացաւ որ եւ մեռաւ՝ ի Ձորեք-
 շարաթի գիշերն՝ լոյս ի Հինգշաբթի, ժը. ժամուն եւ թաղեցաւ, եւ եղև կըս-
 կիծ մեզ նաև բոլոր քաղաքիս եւ յաւէտ մեզ. զի զայլ ոք ոչ զիտէր՝ բայց թէ
 դմեզ: Շաս պերօք Ղօրթմազ Սարգիսն նախ քան զՊէկի մահն յղեցաք, եւ
 մահն Պէկին եւ թաղումն ի Սեպտեմբերի ի՛լ. եղև՝ դռ ող կացցես. եւ ըս-
 տակի էհուալ եմ գրեր ի մէջ Ղօրթմազի թխտերացն. բան ի վեր մի՛ հանցես՝
 զի յետ մեռանելոյ Պէկին զթէմէսիկն ի խազնատարն⁴ տուաք պատուեալ եւ
 զմեր դրամն առաք. բան շմնաց առ նա մեզ, բայց թէ զոր ինչ ընծայ նմտ
 մատուցաք. այս այսպէս եղև: Փա՛ռք բարերարին Աստուծոյ, եկող մէնդիին
 այսօր ի Սուրբ Գաղաքս Լմուտ. եւ յորժամ ետես զՖէնտին իւրն մեռեալ
 թախծեալ սրտիւ՝ յղեաց առ մեզ՝ թէ զիր ունիք տուէք զի ի վաղիւն ի Բիւ-
 ղղի զնալոց եմ. եւ իմ ի լոյս Շարաթի գիշերն ի տօնի (Լուսանցքիմ վրայ)
 Սրբոյն Գէորգայ զգիրս ծրեցի շաշնացեալ. եւ ող լեր ի Տէր ի պարծանս
 խղճոյս Գրեղորի՝ որ ի Սեպտեմբերի իՔ. գպիրս ծրեցի ստիպով. եւ զօրհնու-
 թիւն եւ զողոն սիրոյ ընծայեմ Յարութիւն եւ Սարգիս վարդապետացն, և
 տիրացու Գաղպարին եւ մահտեսի Ալէքսանին եւ այլոցն ամենեցուն: Որդիքն
 իմ եւ քոյդ՝ քառ՝ զա՛ջդ սուրբ Համբուրեն արտօսբախան. նաև մեր ծերն
 եւ Գարբէլ վարդապետն Համայն միաբանիք զսուրբ ա՛ջդ Համբուրեն և աղօ-
 թըս առնեն, զի զայցես բարով, բաւ է:

(Հասցեիմ տակ)

Սէ՛ր իմ, այսօր իղճալի զիր մի ի Հալապու գիտէն եկն եւ ի մեծ ո-
 րողայթ ձգեալ են զխեղճն. եւ զիտեմ առաջի Աստուծոյ եւ մարդոց վկայեմ զի
 սո՛ւտ է եւ իՓթիբայ, զի հաւաստեալ վերահասու եղէ, և արօղքն այս չար
 իրացն հետեսալքն ի մէնջ են արարեալ, վասն հալածելոյ զնա անտի. եւ թէ
 նա ել ի Բերիոյ՝ շատ աղմուկ եւ շփոթ լինելոց է. խնդրեմ զի որքան կարես
 օգնես նմա. ազաչեմ եւ զարձեալ աղբրեմ, վասն Աստուծոյ օգնես նմա եւ
 Տէր քեզ օգնեսցէ՝ ամէն:

Հրատ. ԱՐԱՅ ԳԱՍՅՅԵԱՆ

(Շար. 4)

- 3 Թշուառ, եեզ:
- 4 Գանձապահ: